



ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 04 » հուլիսի 2018 թ.

N 2545 Ա

ք.Ստեփանակերտ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԱՎԱՔԸ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԱԿՈՒՄՆԵՐՈՎ  
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 44-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Ստեփանակերտի քաղաքապետի 2018 թվականի հունիսի 13-ի «Ստեփանակերտ քաղաքում հավաքների ազատության իրականացման և պաշտպանության պայմաններն ու կարգը հաստատելու մասին» N13918Ա որոշմամբ և հիմք ընդունելով «Արցախյան Ջարթոնք» քաղաքացիական շարժման նախաձեռնող խմբի անդամ Անդրանիկ Մանասյանի 2018 թվականի հունիսի 29-ի դիմումը՝

որոշում եմ.

1. «Արցախյան Ջարթոնք» քաղաքացիական շարժման նախաձեռնող խմբի անդամ Անդրանիկ Մանասյանի դիմումը բավարարել մասնակի և թույլատրել 2018 թվականի հուլիսի 7-ին ժամը 9.00-ից մինչև 18.00-ն Ստեփանակերտ քաղաքի Մեսրոպ Մաշտոց փողոցի N 7 շենքի հարակից տարածքում անցկացնել հավաք:

2. Արգելել Ստեփանակերտ քաղաքի 1-ին և 2-րդ գոտիներում ընդգրկված փողոցներով երթ անցկացնելը, Ստեփանակերտ քաղաք մուտք գործող հանրապետական նշանակության ճանապարհների փակումը, տրանսպորտային միջոցների երթևեկության խոչընդոտումը:

3. Պարտավորեցնել Անդրանիկ Մանասյանին հավաքի ընթացքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հավաքի բնականոն ընթացքն ապահովելու համար:

4. Որոշման մասին տեղեկացնել Արցախի Հանրապետության ոստիկանության Ստեփանակերտի քաղաքային վարչությանը և ճանապարհային ոստիկանությանը՝ հավաքի կազմակերպման և անցկացման ընթացքում հասարակական կարգի պահպանության և ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ